ԴՎԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՄԵՀՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ մինչև օրս որոշակի տեսակետ գոյություն չունի։

Արդի պատմաբաններից մի քանիսը, հիմնվելով հին մատենագիրների վկայությունների վրա, Դվին քաղաքի հիմնադրումը վերագրում են Արշակունյաց Խոսրով Կոտակ կամ Խոսրով Փոքր թագավորին (331—339 թթ.), որ հաջորդել էր Տրդատ Ա-ին։ Դրան հակառակ, ուրիշները Դվին քաղաքի հիմնադրությունը դնում են ոչ թե IV դարում, այլ V դարի երկրորդ կեսում և վերագրում են Հայաստանի պարսկական մասի կառավարիչ. մարզպաններին։

1937 թ. սկսված պեղումները, որոնք պատերազմական տարիների դադարից հետո 1946 թ. մինչև այժմ շարունակվում են նոր թափով, հսկայական նյութ են տվել քաղաքի պատմության վերաբերյալ։

Այդ պեղածո նյութերը նոր լույս են սփռում պատմագիրների տված ժլատ տեղեկությունների վրա և պարզում են քաղաքի հիմնադրման ժամանակը։ Դեռ ավելին, պեղածո նյութերի հիման վրա կարելի է շարադրել նաև Դվինի հնագույն պատմությունը, երբ նա դեռևս քաղաք չէր, այլ նույնանուն բլրի վրա բազմած, հզոր ցիկլոպյան սյարսպով ամրացված մի բնակավայր։

* * *

Մեր պատմահայր Մովսես Խորենացին գրել է, որ Հայոց Խոսրով Կոտակ թագավորն իր արքունիքը Արտաշատից փոխադրել է անտառից վերև գտնվող մի բլուրի վրա, որ պարսկերեն Դվին է կոչվում և որ թարգմանվում է բլուր։ Խոսրովն այդ տեղափոխությունը կատարել է Արտաշատի անառողջ և ժանտահոտ կլիմայից ազատվելու նպատակով։ Արտաշատի բնակիչներն էլ հետզհետե կամովին տեղափոխվել են Դվին։

Խորենացու՝ Արտաշատի կլիմայի վերաբերյալ տված տեղեկությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը։

Մինչև օրս էլ այնտեղ, Արաքս գետի լայնորեն փռված ափերին, բազմաթիվ ճահիճներ կան, որոնք զանազան հիվանդությունների և, մանավանդ, ջերմախտի աղբյուր են հանդիսանում։

Խորենացին այդ մասին գրել է.

«Նա (Խոսրով Կոտակը) և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր։ Քանզի ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք ջերմայինք պղտորեալք ժանտահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումն»[1]։

---

1 *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփխիս, 1913, էջ 265։*

Խորենացու այս տեղեկությունը տարբեր ձևերով կրկնել են ուշ ժամանակի մատենագիրները։

Պատմագիր Ստեփանոս Տարոնեցին (X—XI դդ.) գրեթե բառացիորեն կրկնել է Խորենացուն. «Եվ զարքունիսն փոխէ յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»։

Այնուհետև գրում է, որ Արեսն ուղեկցում էր արեգակին և օդը ժանտահոտ էր և այլն[2]։

Կիրակոս Գանձակեցին (XIII դ.) գրում է, որ Խոսրովը՝ «փոխէ զԱրտաշատ քաղաք ի Դուին և անտառս կաղնեաց տեղի զրոսանաց, և թագաւորեալ ամս ինն՝ վախճանի բարեպաշտութեամբ»[3]։

Վարդան Բարձրաբերդցու (XIII դ.) մոտ կարդում ենք. «Իսկ մերն Խոսրով, յերկրորդ ամի Որմզդի՝ պարսից արքային, և ի յութ ամին Կոստանդեայ թագաւորեալ ի վերայ հայրենեացն ամս ինն՝ շինէ զԴուին, որ ասի Բլուր՝ անդ ածելով զրնակիչսն Արտաշատու իւրեանց իսկ կամաւք, վասն հրախառն օդոյն զնէ զարքունիսն իւր անդ»[4]։

Իսկ Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) 352 թ. տակ գրում է՝ «Շինէ Խոսրով զԴուին»[5]։

Այստեղ 352 թ. հավանաբար տպագրական կամ գրչագրական վրիպակ է։ Պետք է կարդալ 332։

Ինչպես տեսնում ենք, ուշ ժամանակի պատմագիրներն իրենց տեղեկությունները քաղելով Խորենացուց, Դվին քաղաքի հիմնադրումը կապում են Խոսրով Կոտակի թագավորության հետ։

Խորենացուց բացի, Խոսրով Կոտակի Դվինում կատարած շինարարական աշխատանքների մասին կարևոր և մանրամասն տեղեկություններ է հաղորդում V դարի պատմագիր Փավստոս Բուզանդը։

Նա գրում է, որ երբ Հայաստանում խաղաղություն հաստատվեց, հայոց Խոսրով Կոտակ թագավորը հրաման տվեց իր զորավարին, որպեսզի նա ժողովրդին դուրս բերի պարտադիր աշխատանքի՝ անտառներից կաղնու տնկիներ բերելու և Արարատյան դաշտավայրում անտառ տնկելու համար. Գառնի արքունի ամրոցից սկսած մինչև Մեծամորու դաշտը և Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում գտնվող Դվին բլուրից մինչև Տիկնունի ամրոցը անտառ տնկեցին և այդ անտառը կոչեցին Մայրի տանեաց։

Նրա հարավային կողմում ևս անտառ տնկեցին և անվանեցին Խոսրովակերտ։ Այնտեղ շինեցին արքունական պալատներ և երկու անտառներն էլ պատեցին պարսպով, բայց միմյանց չմիացրին՝ նրանց միջով անցնող մեծ ճանապարհի պատճառով։ Աճեց, բարձրացավ անտառը և թագավորը հրամայեց այնտեղ լցնել վայրի կենդանիներ և գազաններ, որպեսզի որսի և ուրախ զրոսանքի տեղ լինի։ Վաչե զորավարը կատարում էր թագավորի հրամանը[6]։

---

2 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 67։

3 «Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 21։

4 «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 65։

5 «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց», ի լոյս էած Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 46։

6 «Փավստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց», Վենետիկ, 1832, էջ 18։

Մեր ժամանակների ավագ սերնդի պատմաբաններից մի քանիսը, գոյություն ունեցող վկայություններին և փաստերին հակառակ, «քննադատորեն» խորհնացուն համարում են ոչ թե V դարի, այլ VII դարի և ոմանք էլ նույնիսկ IX դ. հեղինակ և մեղադրում են նրան, որ IV և V դարերի դեպքերը չի իմացել և այդ պատճառով աղավաղել և սխալ է շարադրել պատմությունը։

Խորենացուն ուշ դարերի հեղինակ համարելու պատճառաբանություններից մեկն էլ այն է, որ իբրև թե նա չգիտե Դվին քաղաքի սկզբնական շրջանի պատմությունը և սխալմամբ քաղաքի հիմնադրումը վերագրել է Խոսրով Կոտակին։

Այդ տեսակետին եղողների կարծիքով Դվինը քաղաք է դարձել Խոսրով Կոտակից շատ ուշ, V դարի երկրորդ կեսին, երբ Արշակունյաց հայոց թագավորությունը վաղուց արդեն վերացել էր, Հայաստանի մեծագույն մասը գտնվում էր Պարսկաստանի գերիշխանության ներքո և երկիրը կառավարվում էր մարզպանների ձեռքով։

Պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանցն իր «Հայ Արշակունիներ» գրքում գրում է.

«Միայն V դարի կեսում առաջ է գալիս մի նոր կենտրոն — պարսից մարզպանների և հայոց կաթողիկոսների նստավայր Դվինը, որ IV դարում Արտաշատից հյուսիս գտնվող մի հասարակ բլուր էր։ Բբրև քաղաք Դվինը դեռևս անծանոթ է Ագաթանգեղոսին և Փավստոսին»[7]։

Խալաթյանցը գրում է, որ վերջին Արշակունի հայ թագավորների մայրաքաղաքը, մանավանդ Տրդատից հետո մինչև նրանց թագավորության անկումը V դարի առաջին քառորդի վերջում, ըստ առապես եղել է Վաղարշապատը, կամ Նոր Քաղաքը, որ հույները կոչել են Καινόπολις։

Նշանակում է, եթե Արտաշատը մայրաքաղաք չէր Դվինից առաջ, հասկանալի է, որ Արշակունի թագավորներն իրենց գահն այնտեղից չէին կարող փոխադրել Դվին և Դվինը դարձնել մայրաքաղաք։

Փավստոսը վկայում է, որ Խոսրովը Դվինի բլուրի վրա պալատներ է շինել և շրջապատում անտառներ տնկել, բայց Խալաթյանցն այդ շինարարությունը չի կապում քաղաքի հիմնադրման հետ և այդ պատճառով հայտարարում է, որ Դվինն իբրև քաղաք ծանոթ չէ Ագաթանգեղոսին և Փավստոսին։

Դվինի պեղումների մասնակից և գրավոր աղբյուրների հիման վրա այդ քաղաքի պատմությունը գրող Ասլան Շահնազարյանը գրեթե նույնությամբ կրկնել է Խալաթյանցին և իր գրքի էջերում գրել է.

«Դվինն իբրև քաղաք առաջին անգամ հայկական աղբյուրներում հիշատակվում է պարսից Պերոզ թագավորի (459—484) և հայոց Գյուտ կաթողիկոսի (461—478) օրով՝ կաթողիկոսական աթոռը Վաղարշապատից Դվին տեղափոխելու կապակցությամբ (470—471), որից կարելի է եզրակացնել, որ Դվինի կառուցումը վերաբերում է V դարի երկրորդ կեսի սկզբներին»[8]։

Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանն այս հարցին մոտեցել է ավելի զգուշորեն։ Նա քաղաքի հիմնադրման մասին ոչինչ չի գրել, այլ այն կարծիքն է հայտնել, թե Դվինը 428 թ. հետո մարզպանների մայրաքաղաքն էր և միջազգային առևտրի մեջ խոշոր դեր էր կատարում։ «Երբ հինգերորդ դարում Հայաս-

---

7 Г. Халатянц, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского. Опыт критики источников. Часть I, исследование, Москва, 1906, էջ 201—202։

8 Ас. Шахназарян, Двин, историко-географический очерк. Ереван, 1940, էջ 21։

տանը մարզպանական դարձավ,— գրել է Մանանդյանը,— նրա մայրաքաղաքը, ինչպես հայտնի է, Արտաշատի հյուսիսային մատույցների մոտ գտնվող Դվին քաղաքն էր։ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի մեջ Դվինը շարունակեց խաղալ նշանակալից դեր և միջազգային փոխանակության առևտրի այնպիսի կենտրոն էր, ինչպիսին էր նաև Արտաշատը»[9]։

Սակայն պրոֆ. Գր. Խալաթյանցը, Ա. Շահնազարյանը և ուրիշները սխալվում են, երբ վկայակոչում են Փավստոս Բուզանդին ու Ագաթանգեղոսին, ասելով, թե նրանք IV դարում Դվինը քաղաք չեն համարում։

Ճիշտ է, Փավստոս Բուզանդը քաղաք անունը չի տալիս, բայց, ինչպես տեսանք, մանրամասն նկարագրում է Խոսրով Կոտակի շինարարական աշխատանքները Դվինում և նրա շրջապատում և, որ գլխավորն է, մատնանշում է, որ անտառապատման հետ միասին արքունական պալատներ են կառուցվել։ Հասկանալի է, որ արքունական պալատները կառուցվել են արքունիքի համար, իսկ արքունիքը վարչական կենտրոնում է լինում։ Նշանակում է, Խորենացուն հերքելու համար չի կարելի վկայակոչել Փավստոս Բուզանդին, որովհետև վերջինս ոչ թե հերքում, այլ լրացնում և հաստատում է Խորենացու ասածները։

Իսկ ինչ վերաբերում է Ագաթանգեղոսին, ապա ինչպես հայտնի է, նա գրել է հայոց, վրաց և աղվանից դարձի պատմությունը, որ տեղի է ունեցել IV դարի սկզբին կամ III դարի վերջին։ Դվինի մասին նա ոչինչ չի գրել, որովհետև Դվինը քաղաք է դարձել մի քիչ ավելի ուշ, IV դարի 30-ական թթ.։

Հասկանալի է, որ Դվինի հիմնադրման օրից նա չէր կարող երկրի տնտեսական կյանքում գլխավոր դեր խաղալ, այլ պետք է, որ որոշ ժամանակ Արտաշատը մնար իր առաջնակարգ դերում, մինչև որ արհեստավորների և առևտրականների մի զգալի մասը նախկին մայրաքաղաքից տեղափոխվեր նոր մայրաքաղաքը և վերջինիս մեջ առաջանար ու զարգանար տեղական ծագում ունեցող արհեստավորություն և առևտրական դաս։ Դրա համար անհրաժեշտ էր, հավանաբար, առնվազն հարյուր տարի։

Սակայն հետաքրքիրն այն է, որ պրոֆ. Գր. Խալաթյանցի պնդումներին հակառակ Դվինը հիշատակված է հայ և օտար հնագույն գրավոր աղբյուրներում նույնիսկ ավելի վաղ, քան Խոսրով Կոտակի շինարարական աշխատանքները IV դարի 30-ական թթ.։

Մինչև այժմ ուսումնասիրողները այդ վկայությունները համարել են ժամանակավրեպ տեղեկություններ և ուշադրություն չեն դարձրել դրանց վրա։

Իսկ այժմ, երբ պեղումների միջոցով Դվինում գտնում ենք I և II դդ. դամբարաններ, հեթանոսական շրջանի բնակավայրի հարուստ մնացորդներ, Տիգրան Բ-ին պատկանող գրամներ, արժե հատուկ ուշադրություն դարձնել այդ, այսպես կոչված, «ժամանակավրեպ» տեղեկությունների վրա։

Բերենք մի քանի վկայություններ։

Հայոց, վրաց, արխազաց և ալանաց քրիստոնեություն ընդունելու Ագաթանգեղոսի պատմության արաբական հին թարգմանության մեջ Դվինը հիշատակված է IV դարի սկզբին։ Հայաստանում քրիստոնեություն տարածող Գրիգոր Լուսավորիչը Դվինում առանձին episkoposություն է հաստատում։

---

9 А. Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, изд. 2-ое, Ереван, 1954, էջ 109—110։

Հիշյալ գրքի մեջ գրված է.

«Իսկ ինչ վերաբերում է Ս. Գրիգորին, նա մի քանի եպիսկոպոսներ հաստատեց Այրարատում՝ Վաղարշապատում, Արտաշատում և Դվինում ու հպատակեցրեց իր աթոռին»[10]։

Հենում, Արշակունի հայ թագավորների օրով, եպիսկոպոսական աթոռներ հիմնվում էին մեծ բնակավայրերում և կից էին նախարարական տներին։ Դվինը որպես Ոստան ունեցել է իր առանձին եպիսկոպոսական աթոռը Վաղարշապատից և Արտաշատից անկախ։

«Մկրտության...» գիրքը արաբերենից ռուսերեն թարգմանող պրոֆ. Ն. Մառը Դվինի մասին եղած վկայությունը ժամանակագրական սխալ է համարում այն պատճառով, որ այդ ժամանակ դեռևս Դվինը իբրև քաղաք հիմնադրված չէր։ Կարծում ենք, որ Ն. Մառն այս հարցում սխալ է, որովհետև նույն ժամանակի վերաբերյալ ունենք նաև այլ վկայություններ և բազմաթիվ նյութական տվյալներ։

Ասորի պատմիչ Զենոբ Գլակը իր տեղեկությունը քաղելով այսօր մեզ համար անհայտ մի աղբյուրից, իր պատմության մեջ նշում է, որ քրիստոնեության մուտքի ժամանակ Գրիգոր Լուսավորիչը Դվինի եպիսկոպոս է նշանակել Դիմառիոսին[11], որ ասորի էր։ Այս տեղեկությունը կարող է ճիշտ լինել, որովհետև քրիստոնեություն տարածող առաջին վարդապետները Հայաստանում ասորիներն են եղել և ժամերգությունը, մինչև հայոց գրերի գյուտը, 100 տարուց ավելի, ասորերեն և հետագայում էլ հունարեն էին կատարում։

Ուխտանես պատմիչը (X դ.) խոսելով քրիստոնեության առաջին տարիների հայոց եպիսկոպոսների մասին, ասում է, որ առաջինը Հարքի եպիսկոպոսն է, երկրորդը՝ Ոստանի եպիսկոպոսը և այլն։ Ոստան, ինչպես հայտնի է, կոչվել է Դվին[12]։ Ուխտանես պատմիչը նույն ժամանակներում Դվինը հիշատակում է նաև Հռիփսիմյանց կույսերի կապակցությամբ։ Նա, դեռևս հայոց քրիստոնեություն ընդունելուց առաջ, Դվինը գիտե իբրև քաղաք «Դուին, որ է քաղաք հայոց»։ Նույնիսկ գրում է, որ Հռոմից մինչև Դվին 5100 մղոն է[13]։

Դվինում IV դարի սկզբում բնակչություն լինելու մասին տեղեկություններ կան պահպանված նաև վրացական աղբյուրներում։ «Քարթլիս ցխովրեբա»-ի մեջ Դվինը IV դարում հիշատակված է իբրև քաղաք[14]։

Դվինը, խոսրով Կոտակի ձեռքով IV դարի 30-ական թթ. մայրաքաղաք դառնալուց առաջ, ունեցել է քաղաքային բնակչություն։ Այդ բանը հաստատվում է, բացի գրավոր աղբյուրների վկայությունից, նաև մեր կատարած ծավալուն պեղումներով։

Դվինի բերդից դուրս, քաղաքի կենտրոնական թաղում, գոյություն է ունեցել հսկայական մեծության հեթանոսական մի տաճար, եռանավ բազիլիկ տիպի, որը քրիստոնեություն ընդունելու ժամանակ վեր է ածվել եկեղեցու[15]։

---

10 «Մկրտութիւն Հայոց, Վրաց, Արիազաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ», թարգմանեաց ի հայ Յուսիկ արքեպիսկոպոս, Վաղարշապատ, 1911, էջ 72։

11 «Պատմութիւն Տարոնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի», Վենետիկ, 1832, էջ 24։

12 Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 100։

13 Նույն տեղում, էջ 92։

14 Պրոֆ.-դր. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 170—172։

15 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 88—95։

Այդ եկեղեցու կողքին բացվեց մեծ տրամաչափի մի խոր հոր, որ ամբողջապես լցված էր փայտի մաքուր մոխրով։ Եթե հորը լիներ Դվինի բնակելի թաղերից մեկում և մոխրի հետ միասին դուրս գար նաև կերակուրի մեջ գործածված ոսկորի կտորտանք, հացահատիկի մնացորդ, մրգի կորիզ կամ կեղև և տնային գործածության ամանեղենի բեկորներ, այն ժամանակ կենթադրեինք, որ դա եղել է աղբահոր։ Դվինում մի քանի հարյուր հորեր ենք պեղել, նրանցից և ոչ մեկն այդքան մաքուր ու անխառն մոխիր չի ունեցել։ Նույնիսկ բաղնիքների և արհեստանոցների մոխրահորերն իրենց մեջ ունենում են քարի կամ աղյուսի բեկորներ, մետաղի, ապակու կամ կավի խարամ և արտադրական խոտանի մնացորդներ։

Այսքան մաքուր մոխրով լցված են լինում միայն այն հորերը, որոնք գրտնվում են հեթանոսական մեհյանների կողքին և իրենց մեջ պահում են ատրուշանի սրբազան մոխիրը։ Այդ է պատճառը, որ հնում հեթանոսներին արհամարհանքով կրակապաշտ և նույնիսկ մոխրապաշտ էին անվանում քրիստոնեական եկեղեցու հայրերը։

Թովմա Արծրունին, խոսելով Շավասպ Արծրունու հեթանոսական կրոն ընդունելու մասին, ասում է, որ նա «յանձն առեալ ինքնակամ մոլորութեամբ զօրէնս մազդեզանց մոխրապաշտ յամառութեանց»[16]։

Սկզբում միայն ենթադրեցինք, թե Դվինի կենտրոնական թաղում կառուցված եռանավ բազիլիկ շենքը կարող է նախապես կառուցված լինել իբրև հեթանոսական տաճար՝ հայերի քրիստոնեություն ընդունելուց առաջ, բայց մեր այդ ենթադրությունը շուտով համոզման փոխվեց, երբ լրացուցիչ պեղումների շնորհիվ պարզվեց, որ տաճարի արևելյան կիսաբոլոր արսիդը շենքի հետ չի կառուցվել, այլ հետո է ավելացվել և հնադույն շենքն իր արևելյան կողմում ևս ուղիղ պատ է ունեցել։ Հետագայի պեղումները ևս նորանոր տվյալներով հաստատեցին մեր այդ ենթադրությունը։

Դվինի միջնաբերդում ևս ի հայտ եկավ մի այլ մեհյան և նրա կողքին էլ դարձյալ մաքուր մոխրով լցրած մի հոր, միայն այն տարբերությամբ, որ քաղաքի մեծ տաճարի հորը մեծ էր և շատ խոր, իսկ միջնաբերդինը՝ փոքր։ Այդ տարբերությունը հավանաբար առաջացել էր նրանից, որ քաղաքի տաճարի ատրուշանը մեծ է եղել, իսկ միջնաբերդինը՝ փոքր։ Տաճարների կառուցվածքները, ինչպես նաև դիրքավորումը, երկու տեղում տարբեր էին։ Քաղաքինը արևելահայաց էր, իսկ միջնաբերդինը՝ հյուսիս-արևելյան կողմնորոշում ուներ։ Թեև քրիստոնեական եկեղեցիներն էլ ունենում են որոշ խոտորում արևելքի նկատմամբ, բայց այստեղ դա հազիվ թե պատահական երևույթ լինի, որովհետև տարբերությունը 45 աստիճանից ավելի է։

Քաղաքի եռանավ տաճարը քարից է, այն էլ սրբատաշ, իսկ միջնաբերդինը միայն քարե հիմքեր ունի՝ առանց կրաշաղախի։

Այս տարբերությունները, մեր կարծիքով, այդ երկու տաճարների՝ իրարից տարբեր ժամանակ կառուցված լինելու արդյունք են։ Միջնաբերդի մեհյանը շատ հին է, կառուցված է մ. թ. ա. V դարում, որը հաստատվում է նույն շերտում գտնված բազմաթիվ հնադիտական առարկաներով, իսկ քաղաքի մեծ տաճարը կառուցված է հայերի քրիստոնեություն ընդունելուց ոչ այնքան առաջ, ամենայն հավանականությամբ մեր դարաշրջանի III դարում, որովհետև եթե

16 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ԺԳԲ. 1887, էջ 17։

ավելի վաղ լիներ կառուցված, ապա կրաշաղախ չէր ունենա, այլ պատերի քարերը իրար հետ միացած կլինեին երկաթե կապերով, ինչպես այդ տեսնում ենք առաջին դարում կառուցված Դառնիի հեթանոսական տաճարում և շատ այլ տեղերում։

Թ. Թորամանյանի կարծիքով կրաշաղախը Հայաստան մուտք է գործել մոտ 20 դար առաջ, մեր թվարկության նախօրյակին[17]։

Այսօր, երբ մի շարք հնագույն շենքերի կառուցման ստույգ թվականները մեզ հայտնի են, կարծում ենք, որ Թորամանյանի այդ ենթադրությունը մի փոքր ուղղումի պետք ունի։ Առնվազն մի հարյուրամյակ ետ ենք բերելու կրաշաղախի գործածությունը Հայաստանում, որովհետև կրաշաղախ առաջին շենքերը մեզանում այն հեթանոսական տաճարներն են, որոնք կառուցված էին քրիստոնեության մուտքից ոչ այնքան առաջ և քրիստոնեություն ընդունելու ժամանակ դարձան եկեղեցի, իսկ նրանց քրմերն էլ նույն եկեղեցիներում մնացին իբրև քահանաներ։

Թ. Թորամանյանի մանրազնին ուսումնասիրությունները պարզեցին, որ Տեկորի, Դիրաքլարի և շատ ուրիշ հնագույն եկեղեցիներ նախապես կառուցված են եղել իբրև հեթանոսական տաճար։

1955 թ. և հետագայում կատարված էջմիածնի նորոգությունների ժամանակ սյուների և պատերի հիմքում բացվեցին հեթանոսական շրջանի մնացորդներ, իսկ ավագ խորանի տակ՝ հեթանոսական ատրուշանի մնացորդներ, թոնրանման բարձրագիր կառուցվածքով, որն առնված է կիսաբոլոր կառուցվածքի մեջ։ Դրանով պարզվեց, որ էջմիածնի տաճարը ևս նախապես եղել է հեթանոսական մեհյան, թեև այդ մասին գրավոր աղբյուրներում ոչ մի տեղեկություն չի պահպանվել։

Ագաթանգեղոսի ասելով Գրիգոր Պահլավունին՝ «զնկատեալ տեղին տանն Աստուծոյ շինեաց, զցուցեալն նմա ի տեսլեանն, զյառաջագոյն զրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զեկեղեցին Քրիստոսի»[18]։

Թորամանյանը Դվինի եռանավ կաթողիկե եկեղեցուն թեև ծանոթ էր միայն Խաչիկ Վարդապետի պեղումների շնորհիվ, երբ բացված էին տաճարի վերջին ճեպփոխության մասերը, բայց և այնպես ենթադրել էր, որ այդ եկեղեցին էլ նախապես կառուցված է եղել հեթանոսական մեհյանի տեղում։

Նա գրում է. «Ակնարկ կա պատմագրաց կողմանէ, որ նա (Դվինի կաթողիկե եկեղեցին — Կ. Ղ.) շինված է մեհյանի մը տեղին վրա՝ նույն իսկ մեհյանին քարերով»[19]։

Մենք, որ տեղում մի քանի տարի մանրազնին ուսումնասիրություններ ենք կատարել, Թորամանյանի ասածին կարող ենք ավելացնել, որ քրիստոնեության մուտքի ժամանակ ոչ թե քանդել են Դվինի հեթանոսական մեծ տաճարը և նրա քարերով շինել եկեղեցին, այլ շենքը պահպանել են նույնությամբ և վերացրել են միայն ատրուշանը։ Այդ ժամանակ քանդել են տաճարի արևելյան ուղիղ պատի կենտրոնական մասը և նրա տեղում կառուցել շենքի ընդհանուր քառանկյունի կազմությունից դուրս շեշտված անկյունավոր ավագ խորանը։

---

17 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա, Երևան, 1942, էջ 134։

18 «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1914, էջ 424—425։

19 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա, էջ 214։

Մի այլ, կողմնակի փաստ ևս կարելի է նշել, որ նույնպես կարող է վկայություն համարվել Դվինի եկեղեցու հեթանոսական տաճար լինելու մասին։ V դարի կեսերին, մի քանի հայ նախարարներ Պարսկաստանի օգնությամբ ուզեցին Հայաստանում վերականգնել հեթանոսական կրոնը և Դվինի կաթողիկեն վերածեցին մեհյանի։

Այս դեպքի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին և Դրասխանակերտցուն կրկնող Վարդան վարդապետը[20]։

Կարծում ենք, Դվինի եկեղեցին V դարում մեհյանի վերածեցին ոչ թե պատահարար, այլ այն պատճառով, որ դա նախապես հեթանոսական տաճար է եղել և այդ մասին գիտեցել են այն ժամանակ։

Հեթանոսական մեծ տաճարի գոյությունը Դվինում, այն էլ բլրից դուրս, անհրաժեշտ կլիներ միայն այն դեպքում, եթե այնտեղ գոյություն ունենար մեծ թվով բնակչություն։

Վերջին 15 տարիների ընթացքում կատարված պեղումները պարզեցին, որ Դվինի բլուրն ունեցել է բնակչություն՝ այդ վայրը քաղաք դառնալուց դեռևս շատ առաջ։ Բացի այդ, ուրարտական և հետուրարտյան շրջանում բնակչություն է ունեցել նաև քաղաքի կենտրոնական թաղը և բուն քաղաքի այն տարածությունը, որն ընկած է այժմյան Նորաշեն և Վերին Արտաշատ գյուղերի միջև, քիչ դեպի արևմուտք, որտեղից գտնվեցին ուրարտական խեցանոթներ և զենքեր։ Նույնիսկ կաթողիկե եկեղեցու հյուսիս-արևելյան ավանդատան մեջ կատարված ստուգողական պեղումների ժամանակ, ստորին շերտերում գտնվեցին մեծադիր հում աղյուսով կառուցված բնակելի տան ավերակներ, որոնց մեջ կային խեցանոթների բազմաթիվ բեկորներ և աղորիքներ։

1950 թ., բոլորովին անսպասելի կերպով, քաղաքի կենտրոնական թաղամասում, առաջին անգամ միջնադարյան շերտերի տակ, բացվեցին հեթանոսական շրջանի կարասյա թաղումներ, որոնք արդեն ապացույց էին այն բանի, որ քաղաքի հիմնադրումից շատ առաջ Դվինում բնակչություն է գոյություն ունեցել, այն էլ ոչ միայն բլրի վրա, որտեղից հին շրջանին պատկանող հատ ու կենտ առարկաներ էինք գտել նախքան այդ, այլև քաղաքի տափարակ տարածության վրա։

Մինչ այդ գյուտերը Դվինը մեզ համար միայն միջնադարյան քաղաք էր, բայց դրանից հետո պեղման աշխատանքները սկսեցինք տանել երկու ուղղությամբ։ Աշխատանքների ծանրության կենտրոնը միշտ պահելով միջնադարյան քաղաքի ուսումնասիրության վրա, հետզհետե սկսեցինք ուսումնասիրել նաև քաղաքից առաջ գոյություն ունեցած հին բնակավայրը, որ մեզ տվեց շատ կարևոր և մինչ այդ բոլորովին անծանոթ նյութեր։ Գլխավորն այստեղ Դվինի բլուրն էր, որտեղ հայ ժողովրդի մշակույթի տարբեր ժամանակաշրջանի նյութական հարուստ մնացորդները հաջորդաբար նստած են իրար վրա և հնագետի բրիչը հետզհետե կարող է լույս աշխարհ հանել և գիտության սեփականություն դարձնելու շատ ու շատ դեռևս անծանոթ երևույթներ։

---

20 «Յով՝աննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 58—59։ «Թովմայի վարդ. Արծրունեաց Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊԲ, 1887, էջ 77—78։ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 74։

Մեզ շատ հեռու կտաներ Դվինի բլուրի ստորին շերտերի և նրանց մեջ պահպանված նյութական մշակույթի մասին թեկուզ ընդհանուր տեղեկություններ տալը, այդ մասին կարող են գրվել մեծահատոր ուսումնասիրություններ, բայց այստեղ թռուցիկ կերպով կանգ կառնենք մի քանի հետաքրքիր հայտնագործությունների վրա, որոնք կարևոր են քաղաքի վաղ շրջանի պատմության և հնագույն հայկական բնակավայրի ուսումնասիրության համար։

ՄԱՐԶՊԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԱԲ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆԵՐԸ ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴՈՒՄ

Բազմիցս առիթ ենք ունեցել ասելու, որ Դվինի միջնաբերդի վերին շերտի բնակելի մեծ տունը կառուցված է եղել 893 թ. մեծ երկրաշարժից հետո և զանազան փոփոխություններով ու հավելվածներով իր գոյությունը պահպանել է մինչև քաղաքի վերջնական կործանումը թուրք-թաթարական արշավանքների ժամանակ 1236 թ.[21]։

Նկ. 1. Հում աղյուսե մեծ շինության ավերակների մի մասը Դվինի միջնաբերդում։

Այդ տունն ուսումնասիրելուց հետո նրա ավերակները հետզհետե քանդեցինք և նրա տակ, ավելի խոր ընկած շերտի մեջ, բաց արինք հում աղյուսե հաստ պատերով մի այլ, ավելի մեծ շենք, որը, գտնված հնագիտական առարկաների համաձայն, կառուցված է եղել V դարի կեսերին և պահպանվել է, հաստանարար, մինչև 893 թ. մեծ երկրաշարժը։

Հում աղյուսե մեծ շինության գոյության ժամանակը որոշելու համար կարևոր են կավե բազմաթիվ կնքադրոշմները, որոնք ժապավենով միացված են

[21] Այս շենքի մանրամասն նկարագրությունը, ինչպես նաև չափագրություններն ու լուսանկարները տե՛ս Կ. Զաֆարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները գրքի Ա հատորի 122—198 էջերում, որոնք կատարել են ճարտ. Գր. Քոչոյանը և Լիպարիտ Սադոյանը։

եղել մագաղաթյա փաստաթղթերին։ Այդ փաստաթղթերը հրդեհի զոհ են գնացել, իսկ նրանց իսկությունը հաստատող կավե կնիքները հրդեհի մեջ որոշ չափով թրծվել ու ավելի ամրացել են։ Այդ կնքադրոշմները, որոնց թիվը 40-ից ավելի է, չհաշված նրանց հարյուրավոր բեկորները, որոնցից լրիվ պատկեր չի կարելի ստանալ, գտնվեցին հում աղյուսե մեծ շինության արևելյան կողմում, նույն շերտի մեջ։ Դրանցից շատերը փոքր են և իրենց վրա կրում են մեկ կամ երկու դրոշմ, իսկ մի քանի մեծերը կնքված են մի քանի տասնյակ կնիքներով։ Այս մեծերը, անշուշտ, կցված են եղել աշխարհիկ և հոգևոր իշխանների մասնակցությամբ կազմված կարևոր որոշումներին։

Կնքադրոշմները, հոգևորականների խաչաքանդակ նշաններով և աշխարհիկ իշխանների զանազան կենդանիներ և թռչուններ պատկերող տոհմանիշներով, բոլորն էլ պատկանում են այսպես կոչված սասանյան ժամանակի արվեստին, հետևապես և պատկանում են մարզպանական ժամանակներին։

Նշանակում է, Դվինում պետական դիվան է եղել ոչ միայն Արշակունի հայ թագավորների օրով, այլև մարզպանների ժամանակ, արաբական տիրապետությունից առաջ, որոնց փաստաթղթերին կցված կնքադրոշմների մի մասը գտնվեց հում աղյուսե մեծ շինության պետական դիվանին հատկացված հարկաբաժիններից մեկում։

Դվինի պետական դիվանի գոյության մասին ունենք նաև հին մատենագիրների գրավոր վկայությունը։

Սեբեոս պատմագիրը (VII դ.) գրում է, որ Սյունյաց Վահան իշխանը Հայաստանից անջատվելով, պարսից Խոսրով Արքայից (Խոսրով Անուշիրվան 531—579) խնդրում է թույլ տալ Սյունյաց աշխարհի դիվանը Դվինից փոխադրել Փայտակարան քաղաքը, որպեսզի Սյունիքը այլևս կապ չունենա Հայաստանի հետ։

Այս բաժանումը և Սյունյաց դիվանի փոխադրությունը Դվինից Փայտակարան Սեբեոսը դրել է 572 թ. հայոց մեծ ապստամբությունից առաջ։ «Յառաջ քան զայս ապստամբեալ...», որ «եղև ի ԽԱ ամի թագաւորութեան Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ». «Զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դբունայ ի Փայտակարան քաղաք»[22]։

Դվինի դիվանի կողքին, միևնույն շերտի մեջ, բացվեց նաև կնիքներ պատրաստող վարպետի աշխատանոց, որտեղ գտնվեցին պատրաստի կնիքներ, ձույլ ոսկու կտոր, փորագրիչի արհեստանոցային գործիքներ և կարծր քարերի բազմաթիվ կտորներ, որոնք նախապատրաստված էին մատանու կնքադիր ակների համար։

Կարծում ենք միայն այսքանն էլ բավական է ապացուցված համարելու, որ հում աղյուսե մեծ շինությունը եղել է մարզպանների նստավայրը։

Առարկայական մնացորդներից երևում է, որ այդ նույն շենքն իր գոյությունը պահպանել է նաև արաբական տիրապետության ժամանակ, մինչև մեծ երկրաշարժը։

Նշանակում է, արաբ ոստիկաններն իրենք նոր շենք չեն կառուցել, այլ մասնակի նորոգություններ կատարելուց հետո բնակվել են իրենցից երկու հարյուր տարի առաջ կառուցված և բազմաթիվ կարկատաններ ունեցող հում աղյուսե մեծ շինության մեջ։

---

22 «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 40։

Բոլոր դեպքերում մարդպանների ընակելի այս շենքը վաղ միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության բացառիկ նմուշներից մեկն է և գիտական մեծ արժեք ունի։

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԳԱՀԱՆԻՍՏ ԴԱՀԼԻՃԸ ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴՈՒՄ

Հում աղյուսե մեծ շինության արևելյան ծայրին, նրա սահմաններից դուրս, 1962 թ. ի հայտ եկավ քարակերտ պատերով և արևմուտքից դեպի արևելք երկարող քառանկյունի մի մեծ դահլիճ, որի արևմտյան հիմնապատը գտնվում էր հում աղյուսե շենքի տակ։ Նշանակում է, այս դահլիճը հում աղյուսե շենքից ավելի հին է և, եթե քանդենք այդ շենքը, նրա տակին կգտնենք դահլիճի հետ կապված քարաշեն տան մյուս մասերը։

Դահլիճն արևելքից արևմուտք ունեցել է 29 մետր երկարություն և հարավից հյուսիս՝ 12,5 մ. լայնք, հետևապես նա ունեցել է 362 ք. մետր մակերես։

Դահլիճն ունի կրածեփ հուզկ հատակ, որտեղ մանր գետաքարերի մամլած շերտը ծածկված է կրային շաղախով։

Թեև տեղում մնացել են դահլիճի միայն հիմնապատերը, հատակին հավասար բարձրությամբ, բայց պեղումների միջոցին գտնվեցին պատերից ընկած սրբատաշ տուֆ քարեր, որոնք վկայում են այն մասին, որ այդ հսկայական դահլիճը, եկեղեցիների նման, ներսից և դրսից ունեցել է կրաշաղախի օգնությամբ շարված սրբատաշ պատեր։

Դահլիճի միջից գտնվեց լավ մշակված տուֆաքար մի խարիսխ՝ 80.80 սմ նստվածքով և 57 սմ բարձրությամբ։ Այսն բացակայող կլոր բունն ունեցել է 64 սմ տրամագիծ, իսկ խոյակի մասին գաղափար չունենք, որովհետև նրանից ոչ մի բեկոր չի պահպանվել տեղում։

Նկ. 2. Արշակունյաց գահանիստ դահլիճի ներքին սյուներից մեկի խարիսխը Դվինի սրբատաշքարդում

Հատակի վրա նկատվում է, որ դահլիճն ըստ լայնության բաժանված է եղել երեք մասի, ըստ որում կենտրոնականը երկու անգամ ավելի լայն, քան կողքինները։ Դահլիճի միջի սյուների շարքերը դրված են եղել այդ գծերի վրա, որոնք դահլիճը բաժանել են երեք նավի, ճիշտ այնպես, ինչպես այդ նկատում ենք հայոց հին եկեղեցիների կառուցվածքի մեջ։ Նշանակում է, այս աշխարհիկ շենքը եղել է եռանավ բազիլիկ դահլիճ։

Դահլիճի արևմտյան կողմի կենտրոնում մի կիսաբոլոր տարածություն կա, որտեղ կրաշաղախ հատակը որոշակի գծերով ընդհատվում է։ Պարզ երևում է, որ այդտեղ դրված է եղել հատակին ամրացված բարձրադիր մի գահավորակ՝ 2,5 մետր տրամագծով։ Հայոց արքան այդ գահավորակի վրա է բարձրացել նրա առաջակողմի մի քանի աստիճաններով, որոնց հետքերը լավ պահպանված են հատակի վրա։

Այս գահանիստ դահլիճը և նրա շարունակությունը կազմող պալատի մյուս մասերը, որ դեռևս բաց չեն արված, կառուցված են IV դարում, Խոսրով Կոտակի ժամանակ և կազմել են Արշակունի հայ թագավորների պալատի մասերը։

Մեր այս ենթադրությունը հաստատվում է հետևյալ փաստերով.

1. Մարզպանների օրով քարաշեն այդ դահլիճն արդեն հիմնահատակ քանդված էր և նրա ավերակների վրա նույն տեղում կառուցված էր դիվանի նոր շենքը, որի մեջ հայտնագործվեցին V և VI դարերի բազմաթիվ կնքադրոշմներ։

2. Դահլիճի տակ ավելի խոր ընկած շերտերում միջնադարյան քաղաքին պատկանող ուրիշ շենքեր չկան։ Դահլիճի տակի շերտը վերաբերում է քաղաքից առաջ գոյություն ունեցող հնագույն հայկական բնակավայրին, որ պատկանել է աքեմենյան և նրան հաջորդող նախաքրիստոնեական ժամանակներին։

3. Դահլիճն ունեցել է եռանավ բազիլիկ տաճարի տեսք, ինչպիսիք Հայաստանում կառուցվել են III դարից սկսած մինչև V և ամենաուշը՝ մինչև VI դարը։ Դրանք բոլորն էլ եկեղեցիներ են, որոնք առաջացել են աշխարհիկ նույնատիպ դահլիճներից։ Նշանակում է, այդ տիպի աշխարհիկ դահլիճներն ավելի հին են, քան նրանցից սերված եկեղեցական շենքերը։

4. Դվինի գահանիստ դահլիճն առայժմ միակ հուշարձանն է Հայաստանում, որ լիապես համապատասխանում է իր ոճի հունարեն βασιλική անվան. հնում արքայական գահանիստ դահլիճն է այդպես կոչվել, որ իր անունը ստացել է βασιλεύς — արքա բառից, իսկ արքայական պալատն ընդհանրապես հունարենում կոչվել է βασίλειον։ Հետագայում, Հռոմում, բազիլիկա էին կոչվում նիստերի և դատաստանական ատյանների սրահները։ Ավելի ուշ և այժմ այդպես են կոչվում եկեղեցական թաղակապ սրահները, որոնց ոճը վերցված է թագավորական հին սրահներից։

5. Բազիլիկ շենքերը շատ հին են Հայաստանում։ Նրանց տեղական ծագումը ապացուցվում է ոչ միայն հեթանոսական շրջանի բազմաթիվ տաճարներով և վաղ քրիստոնեական դարերի եկեղեցիներով, այլև ազգագրական տվյալներով, որոնք, դժբախտաբար, մինչև օրս հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել։ Պատմական Հայաստանի մի շարք վայրերում՝ Կարինում, Երզնկայում, Ալաշկերտում, Կարսում, Շիրակում և շատ այլ գավառներում փայտածածկ եռանավ բազիլիկ շենքերը սովորական են գյուղերում և քաղաքներում։

Հայ շինականը դարեր շարունակ իր երկարաձիգ գոմն ու նրան կից գոմը սենյակը կառուցել է երկու շարք սյուների օգնությամբ, որ եռանավ բազիլիկ կառուցվածքների ամենատարածված ձևն է։

Դվինի գահանիստ դահլիճում դահավորակի վրա նստել է հայոց արքան, իսկ դահլիճի մեջ, կենտրոնական նավում, ըստ գահերեցության, իրենց համար հաստատված տեղերում խորհրդի են նստել հայոց նախարարները։

Այս բացառիկ շենքը, ինչպես ասացինք, քանդված է եղել մարզպանության ժամանակ, հավանաբար VI դարում և նրա տեղում կառուցել են մի քանի փոքրադիր շենքեր, որոնցից մեկը հատկացված է եղել Հայաստանի պետական դիվանին։

ԴՎԻՆԻ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՄԵՀՅԱՆԸ

Մեհյանից պահպանվել է միայն նրա ատրուշանը, այսինքն մեհյանի կրակարանը և եռաստվածությունը ներկայացնող կավե տախտակը, որ պեղմամբ դուրս եկավ կենտրոնական բլրի հարավային մասում, քաղաքային շերտերի տակ, 1962 թ.։ Մինչ այդ հայկական ատրուշանների մասին ոչ մի դաղափար չունեինք։

Նախքան այդ ատրուշանի գյուտը, մենք ստորին շերտերն ուսումնասիրելու նպատակով բլրի հյուսիսային կողմում խորացանք 14 մետրի չափ և հայտնաբերեցինք պղնձեդարյան մշակույթի բազմաթիվ առարկաներ, որոնք հայտնի էին մեզ Հայաստանի մի քանի այլ հնավայրերից (Շենգավիթ, Շրեշբլուր, Թաղավորանիստ և այլն)։

Այդտեղ գտնվեցին քարե մի շարք գործիքներ, ճնշմամբ կատարված ոլորտներով զարդարուն կավանոթների բեկորներ, օջախի եռանկյունաձև շարժական հենարաններ և այլն, բոլորն էլ մ. թ. ա. IV, III հազարամյակի առարկաներ։

Ավելի խորանալ անհնարին էր, որովհետև կարող էին փլվածքներ առաջանալ, իսկ պեղումների տարածությունն անհնարին էր ընդարձակել, որովհետև հում աղյուսե մեծ շինության մասերը, որոնք դեռևս չէին ուսումնասիրված, հասնում էին այդտեղ։ Այդ պատճառով ստորին շերտերն ուսումնասիրելու համար ընտրեցինք բլրի հարավային կողմը, որտեղ, ինչպես ասացինք, 1962 թ., քաղաքի շերտի տակ, մոտ 7 մետր խորության մեջ բացվեց մեհյանի ատրուշանը։

Նախքան ատրուշանի բացվելը նրա շրջապատում, հողի նույն շերտի մեջ, ի հայտ եկան խեցանոթների բազմաթիվ բեկորներ և ամբողջական առարկաներ։

Այս շերտում գտնված առարկաների մեջ ամենաբնորոշը գնդաձև մեծ կարասներն են, որ ունեն հաստ, մոխրագույն խեցի, երեք գոտիներ և մոտ մեկ մետր փորի տրամագիծ։ Դրանց բարձրությունը լինում է մեկ մետրից մինչև մեկ մետր երեսուն սանտիմետր։

Նկ. 3. Միջնաբերդի ստորին շերտերում բացված գնդաձև կարասներից մեկը պեղման ընթացքում։

Այդ կարասները գրեթե վիզ չունեն և բերանն անմիջականորեն կպած է փորին։ Նստուկներն էլ շատ փոքր են և կարասը գնդաձևությունից դուրս չեն բերում։

Մինչ Դվինի պեղումները այդպիսի մի կարաս մեզ հայտնի էր Կարմիր բլուրից, որը գտնվել էր պեղումներից առաջ, 1936 թ. պարարտացման համար հող տանող գյուղացիների ձեռքով[3]։ Այդ կարասը, որ այժմ ցուցադրված է Հայաստանի պատմության թանգարանում, բացի գոտիներից, փորի վերին մասում ունի գալարվող օձի ուռուցիկ պատկեր։

Դվինում այդպիսի հաստախեցի մեծ կարասներ գտնվեցին տասնյակներով, բայց նրանցից և ոչ մեկի վրա օձանիշ զարդարանք չկար և ընդհանրապես իրենց վրա զարդեր չունեն, եթե չհաշվենք մեկ-երկուսի գոտիների և շրթների ալիքավոր կամ անկյունավոր գծագարդերը։

---

[3] Կ. Ղաֆադարյան, Կարմիր բլուրի նորագյուտ սեպագիր արձանագրությունը, Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի, գիրք 2-րդ, Երևան, 1937, էջ 225։

Նույն շերտի մեջ Դվինում ի հայտ եկան մեծ բանակությամբ ջարդոտված խեցեղենի բեկորներ, որոնք փոխադրեցինք Հայաստանի պատմության թանգարանի վերականգնման արհեստանոցը, որտեղ և մեծ համբերությամբ, խեցեղենի մասնագետ Ողիսես Հովհաննիսյանը հետզհետե վերականգնեց մի երկու տասնյակ նրբախեցի փոքրադիր կարասներ և բազմաթիվ այլ խեցանոթներ։

Փոքրադիր կարասները մեծերի նման գնդաձև չեն, այլ երկարաձիգ են։ Նրանց փորի վրա կան ուռուցիկ բովանդակավոր զարդեր։ Մի քանիսի վրա պատկերված են որսի տեսարաններ, որտեղ հեծյալները նետ-ու աղեղով հալածում են որսի կենդանիներին, մի այլ կարասի վրա հովիվները երկար մահակները ձեռներին պահպանում են արածող անասուններին, մի ուրիշի վրա կան գալարվող երկու օձերի պատկերներ, որոնք կարասի փորին իրար տակ որևթև ամբողջ գոտի են կազմում։ Այս մեծ ու փոքր կարասների հետ նույն շերտի մեջ գտնվեցին նաև բազմաթիվ կճուճներ, որոնք ցլագլուխ բռնակներ ունեն։ Այդտեղ գտնվեցին նաև երկարավիզ գեղեցիկ գավեր և խիստ փոքր կճուճիկներ, որ հազիվ թե տնտեսության մեջ հնարավոր լինի որևէ բանի համար օգտագործել։ Հավանաբար այդ կճուճաձև փոքրիկ անոթները, որ հազիվ 50—80 քառ. սմ տարողություն ունեն, արհեստանոցային պիտույքներ են։

Նկ. 4. Միջնարերդի ստորին շերտերում բացված երկարաձիգ կենդանագարդ կարասներից մեկը։

Հետաքրքիրն այն է, որ այդ նույն առարկաների միջավայրում գտնվեց նաև քառանկյունի կավե մի տախտակ, որի վերին մասում կային մեծ և փոքր մարդկային դեմքեր, երկու շարքի վրա, իսկ ներքևի մասում հյուսածո բազմաթիվ զարդեր և գալարվող օձի պատկեր։ Տախտակն ուներ մոտ 5 սմ հաստություն, 62 սմ բարձրություն և 51 սմ լայնք (միջին մասում, որովհետև վերևը լայն է, իսկ ստորին մասը քիչ ավելի նեղ)։ Հասկանալի է, որ այդ տախտակը տնտեսական կիրառություն չէր կարող ունենալ, այլ ծառայել է հին համայնքին իբրև պաշտամունքի առարկա։ Սակայն, թե որտեղ է եղել դրված, կամ թե ինչպես են պաշտել այդ առարկան, ոչինչ չենք կարող ասել, որովհետև այն գտանք տեղահան արված և կոտրատված վիճակում։

Շուտով բախտը մեզ ժպտաց և մի այդպիսի տախտակ էլ գտանք իր իսկական տեղում, կանգուն վիճակում։ 1962 թ. նույն տեղում, որտեղից մեծ թվով խեցանոթներ էին դուրս գալիս, բացվեց հում կավից պատրաստած մի կոթող, որի վրա հագցրած էր թրծած կավի քառանկյուն մի տախտակ, մոտավորապես այնպիսին, ինչպիսին գտել էինք նախորդ տարիներին, միայն թե այս տախտակի վրա մարդկային դեմքերի թիվը քիչ էր, ընդամենը երեք, որոնք, մեր կարծիքով, պատկերում են հայոց հին հեթանոսական կրոնի երեք գլխավոր աստվածներին։ Ի դեպ, նախորդ տարիներին գտնված կավե տախտակի վրա թեև դեմքերի թիվը ոչ թե երեք է, այլ յոթ, բայց նրանցից երեքը մեծ են, որ գլխա-

վոր աստվածների խորհրդանիշն են պատկերում, իսկ մյուսները փոքր են, հեռնապես երկրորդական աստվածներն են խորհրդանշում։

Կավե կոթողն ուներ 115 սմ բարձրություն, որ պայմանական է և համապատասխանում է այսօրվա վիճակին, նա հնում ավելի բարձր է եղել, բայց վերին մասերը հետզհետե փշրվել և թափվել են։ Տախտակի լայնքը 128 սմ է, հաստությունը՝ 35—40 սմ։ Նա դրեթե ուղղահայաց դիրքով կանգնած է եղել մի շենքի մեջ, որի պատերի հիմքերը քարից էին, իսկ վերին մասը, որ մեծ մասամբ քայքայված էր, շարված էր մեծադիր և հարդախառն հում աղյուսով։

Կավե կոթողի թիկունքը կապված էր մեծ մասամբ քայքայված և տձևացած ինչ-որ կավակերտ շինվածքի հետ, որ, հավանաբար, կոթողին ծառայել էր իբրև հենարան։

Կոթողի ստորին մասին հագցրած տախտակի վրայի մարդկային երեք դեմքերը, որ ինչպես ասացինք, աստվածների խորհրդանիշն են հանդիսանում, ունեն խոր փորված կլոր աչքեր։ Այդ դեմքերի տակ իրար են հաջորդում մի քանի շարք հյուսածո ուռուցիկ զարդաշարաններ, որոնցից ներքև տախտակի մի եզրից մինչև մյուսն է հասնում գալարվող մի օձ։ Այնուհետև տախտակի երկու եզրերին կան երկու փոքրիկ շրջաններ, որոնցից յուրաքանչյուրի կենտրոնում ցցված է մի ելուստ, իսկ ավելի ներքև, տախտակի երկու կողքերին, կան հաջորդաբար իրար մեջ կամարներ առաջացնող ուռուցիկ զարդաձևեր։

Նկ. 5. Միջնաբերդի ատրուշանի պաշտամունքային տախտակը՝ եռաստվածության խորհրդանիշով.

Կոթողի առաջ մի տարածություն կա, որ եզրափակված է քարերի կիսաբոլոր բարձրադիր շարքով։ Այդ հարթակն ատրուշանի համար ծառայել է իբրև կրակարան։ Մեր պեղումների միջոցին այդ հարթակը ամբողջովին ծածկված էր մոխրի շերտով և կենտրոնում կար քրեղանի նման, բայց պատվանդանավոր մի անոթ, որի մեջ, ըստ երևույթին, խունկ են ծխել ծիսակատարությունների ժամանակ։

Այս կոթողն իր պատկերավոր տախտակով և առջևի հարթակով միասին հանդիսացել է Դվինի բլրի հայկական հնագույն բնակչության մեհյանի ատրուշանը, որտեղ բնակիչները կատարել են իրենց կրոնական ծիսակատարությունները ատրուշանի կրակի շուրջը։

Այս ատրուշանը, ինչպես նաև նույն շերտում գտնված խեցանոթների հարուստ ժողովածուն, բոլորովին նորություն են Հայաստանի հնագիտության համար։

Դվինի միջնաբերդում մշակութային այդ շերտի ժամանակը որոշելը ևս դժվարություններ չի հարուցում, որովհետև նա անմիջականորեն նստած է ուրարտական շերտի վրա։ 1964 թ., ատրուշանի արևելյան կողմի քառակուսիներում, նրա տակ գտնվող շերտի մեջ, ի հայտ եկան բազմաթիվ առարկաներ, որոնք բնորոշ են ուրարտական մշակույթի համար և մեզ ծանոթ են Կարմիր

բլուրի, Թոփրակ Կալեի (Վան) պեղումներից և այլ վայրերից։ Այդտեղ գտնվեցին կահույքի համար իրրև ներդիր գործածված ոսկրե առարկաներ, բրոնզե և երկաթե իրեր (դաշույններ, նետասլաքներ, սուր) և բազմաթիվ այլ առարկաներ։

Նկ. 6. Միջնաբերդում գտնված ատրուշանի մի այլ տախտակ՝ երեք գլխավոր և չորս երկրորդական աստվածների խորհրդանիշով։

Ժամանակի որոշման հարցում մեզ օգնության են գալիս նաև Աքեմենյան Պարսկաստանից մեզ հասած իրերը, որոնք իրենց զարդարանքի բովանդակությամբ նմանություն ունեն Դվինի ատրուշանի հետ կապված առարկաներին։

Այսպիսով, կարծում ենք, որ Դվինի միջնաբերդի ատրուշանը և նրա հետ գտնված հարուստ խեցեղենը պատկանում են մ. թ. ա. V—III դարերում Դվինի բլրի վրա ապրող հայկական համայնքին[24]։

Հետաքրքիր է նաև այն, որ հայկական հեթանոսական մեհյանները միատիպ չեն, առայժմ մեզ հայտնի են միմյանցից խիստ կերպով տարբերվող երեք տեսակի մեհյաններ։

Դրանցից հնագույնը Դվինի միջնաբերդի ատրուշանն է, որ, ինչպես ասացինք, պատկանում է մ. թ. ա. V—III դարերին և բոլորովին նման չէ իրեն ժամանակակից պարսկական ատրուշաններին, ինչպես, օրինակ, Պերսեպոլիսի մոտ գտնվող Նաքշե Ռուստամի զույգ ատրուշաններին կամ ուշ ժամանակների Սասանյան Պարսկաստանի բոլոր տեսակի կրակապաշտական տաճարներին[25]։

Երկրորդ տիպը Գառնիի հեթանոսական տաճարն է, որ Հայաստանի հելլենիստական մշակույթի բացառիկ նմուշներից մեկն է, կառուցված մեր դարաշրջանի առաջին դարում։ Այսպիսի տաճարներ Հայաստանում շատ են եղել, նվիրված տարբեր աստվածությունների, որոնց մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում պատմագիր Ագաթանգեղոսն իր գրքի երրորդ մասում։

Երրորդը, որ բոլորովին չի կապվում ոչ առաջինի և ոչ էլ հելլենիստականի հետ, քրիստոնեություն ընդունելուց քիչ առաջ Հայաստանում լայնորեն տարածված եռանավ և միանավ բազիլիկ տաճարներն են, որոնք քրիստոնեություն ընդունելու ժամանակ վերածվեցին եկեղեցիների (Դիրաքլար, Դվին, Քասախ, Էջմիածին և այլն)։

Այս տարբերությունները, մեր կարծիքով, առաջ են եկել ոչ միայն ժամանակով իրարից տարբեր լինելու պատճառով, այլև կրոնական հասկացողությունների տարբերությունից հեթանոսական Հայաստանում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դվին քաղաքը հիմնադրվել է ոչ թե հինգերորդ դարի կեսերին, ինչպես կարծել են մեր ժամանակների ավագ սերնդի պատմաբաններից շատերը, այլ չորրորդ դարի 30-ական թթ., ինչպես վկայում են մեր հին մատենագիրները։

2. Դվինի պեղումները պարզեցին, որ քաղաքը հիմնադրվել է ոչ թե ամայի տեղում, այլ այնտեղ գոյություն ունեցող մի հին բնակավայրի վրա, որն իր սկիզբն է առել դեռևս III, գուցե և IV հազարամյակներում մեր թվարկությունից առաջ։

3. Առայժմ դժվար է ասել, թե այդ բնակավայրը մշտապես, առանց ընդհատումների է իր գոյությունը պահպանել մինչև քաղաքի հիմնադրությունը IV դարում, թե՞ ունեցել է որոշ ընդհատումներ։ Այդ հարցը, անշուշտ, կպարզվի քաղաքի ստորին շերտերի հետագա պեղումների ընթացքում։

4. Միջնաբերդի մեծ դահլիճը կառուցված է եղել Արշակունի հայ թագավորների օրով՝ իբրև գահանիստ դահլիճ-սրահ։

---

[24] Այս շերտի մասին ընդարձակ ուսումնասիրություն է պարունակում Դվինի պեղումների արդյունքին նվիրված աշխատության երկրորդ հատորը, որ այժմ տպագրության է պատրաստվում։

[25] André Godard, L'art de l'Iran, Arthaud, Paris, 1962, Phot. № 35, էջ 229։

5. Աղյուսե մեծ շինությունը Դվինի միջնաբերդում կառուցված է մարզպանների օրով, V կամ VI դարերում և հանդիսացել է նրանց, ինչպես նաև նրանցից հետո Դվինում նստող արաբ ոստիկանների պալատը։

6. Միջնաբերդում բացված մեհյանի ատրուշանը պատկանում է Դվինի նախահելլենիստական ժամանակաշրջանին և կառուցված է եղել հավանաբար մ. թ. ա. V դարում։

7. Ատրուշանի շրջապատում հայտնագործված հնագիտական հարուստ մնացորդները նորություն են Հայաստանի հնագիտության համար և լրացնում են այն խոշոր բացը, որ վերարերում էր ուրարտական և հելլենիստական մշակույթների միջև եղած ժամանակաշրջանին։

О ВРЕМЕНИ ОСНОВАНИЯ ГОРОДА ДВИНА И О ЯЗЫЧЕСКОМ ХРАМЕ НА ВЫШГОРОДЕ

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

Город Двин был основан не в V в., как предполагают некоторые представители старшего поколения историков нашего времени, а в тридцатых годах IV в., как об этом сообщают древнеармянские историки Мовсес Хоренаци (V в.), Фавст Бузанд (V в.) и др. Раскопками установлено, что Двин был основан не на необитаемом и пустом месте, а на территории древнего поселения, которое берет свое начало в III (может быть, даже в IV) тысячелетии до н. э.

В настоящее время трудно сказать, продолжало-ли свое существование древнее поселение двинского холма беспрерывно, до основания средневекового города в IV в., или же имели место некоторые перерывы. Для выяснения этого вопроса необходимы дальнейшие раскопки на двинском холме.

Большой тронный зал из чистотесаных камней на востоке холма являлся частью большого дворцового здания, построенного аршакидским царем Хосровом Кодаком в 30-х годах IV в. Большое дворцовое здание из сырцового кирпича было построено в середине V в. правителями персидской части Армении—Марзпанами. Это здание в VIII—IX вв. использовали также арабские наместники в Армении. Окончательно оно было разрушено до основания при сильном землетрясении в 893 г.

Обнаруженные на двинском холме языческий храм и капище, относящиеся к V—III вв. до н. э., по своим конструкциям резко отличаются от поздних храмов эллинистического типа. Найденная вокруг языческого храма богатая керамика (с накладным сюжетным орнаментом животных, людей и змей) в Армении обнаруживается впервые и является новостью для армянской археологии.